ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———————— 2024թ. **N___ Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է՝

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«29. Իրավական ակտի ընդունման նախաձեռնություններն Ավագանու նիստում քննարկվում են Աշխատակազմի քարտուղարին Օրենքով և կանոնակարգով նախատեսված կարգով ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործող կարգավորումը սահմանում է, որ իրավական ակտի ընդունման նախաձեռնություններն Ավագանու նիստում քննարկվում են ստացման օրվանից ոչ ուշ, քան չորս ամսվա ընթացքում, ինչն անհիմն սահմանափակում է ավագանու անդամի իրավաստեղծ գործունեությունը և հարցերին օպերատիվ լուծումներ առաջարկելու նրա հնարավորությունը: Առաջարկվում է 4 ամիսը կրճատել՝ սահմանելով 2 ամիս:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան